հունեցոց, Մամիկոնյանց, և Արծրունի (Մահկանաբերդի) տոհմերին նվիրված մեծ ու փոքր աշխատություններ, յուրաքանչյուրը մի ամբողջություն, բայց փոխադարձաբար իրար լրացնող և բոլորը միասին մի նպաստ արևելյան բովանդակ Հայաստանի պատմության լուսաբանության՝ վերև գծված սահմանի մեջ։ Եթե հաջողվի մեզ այս ծրագիրն իրագործել, որի մի մասը պատրաստ է, մյուսի նյութերը հավաքված, կարծում ենք, ԺԳ. և հետագա դարերի գիտական պատմության տված մեր լումայի հետ, նպաստած կլինենք և ուրիշներին նոր ուսումնասիրություններ կատարելու այն նյութերի հիման վրա, որ ըստ մեծի մասին մեր հնագիտական ճանապարհորդությունների հետևանք են, տեղն ու տեղը ստուգած, լուսանկա՝ ած կամ նկարագրած, հնարավորություն տալով նաև վերստուգելու մեր մտքերն ու յեզրակացությունները։

Ներկայիս լույս է տեսնում «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատության միայն առաջին՝ պատմական մասը. յերկրորդը, որ պատրաստ է դարձյալ յուր բնագրով և կլիշաներով, հապաղում է միայն տեխնիքական պատճառներով, որ հույս ունինք շուտով վերացնել և շարունակել տպագրությունը. դրա վերնագիրն է «Խաղբակյանց կամ Պռոշյանց հոգևոր կեդրոններն ու վանքերը», որի մեջ է մտնում և միջնադարյան Հայոց «համալսարանի»՝ Գլաձորի դպրոցի պատմությունը ընդարձակ գլխով։ Յերկրորդ մասի հետ կհրատարակվի յերրորդ մասը՝ Հավելվածները, այսինքն հիշատակարաններն ու արձանագրությունները իրենց գիտական ապարատով, որով կլրանա և ամբողջ հատորը։

Մենք շատ կցանկալինք, որ հնարավորություն ունենայինք ամբողջ հատորը միանգամից դնել բանասեր հասարակության առաջ, որպես զի պարզ գաղափար կազմվեր մեր վորդեգրած գիտական մեթոդի և ընդհանրապես այս շարքի նպատակի մասին, բայց կարծում ենք, ուշադիր ընթերցողը հենց այս առաջին մասով էլ, ինչպես և մեր գրած «Ագիբեկենք և նրանց շինարարական գործը»* կամ Потомство Тарсаича и Минахатуны** Որբելյանց պատմության հատվածով, գաղափար կարող է կազմել, թե ինչ է մեր ձգտումն ու ցանկությունը այս շարքի նկատմամբ։

Թույլ ենք տալիս մեզ ավելացնելու, և խնդրում ենք անհամեստություն չնկատել այդ, թե մեզ չի պակասում վոչ սեր, վոչ յեռանդ, վոչ ջանասիրություն և վոչ նյութական զոհողության պատրաստակամություն, վորքան հնարավոր է այդ մեր կողմից, դեպի այս և գիտական մեր մյուս աշխատանքները, կավելացնենք նաև իբրև վանական չունինք վոր և է նյութական շահի կամ վարձատրության ակնկալություն, բայց և այնպես այսպիսի աշխատանքներ կատարելու և տպագրելու համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, որ չունինք մենք, և ճնում է գիտության և արվեստի հովանավոր հաստատություններին և անձանց հոգալ այդ։ Կհաջողվի՞ մեզ մեր իղձն ու փափագը իրագործել և մատչելի դարձնել բանասեր հասարակության, չգիտենք. բայց կանենք, ինչվոր անել կարող ենք, այսինքն աշխատել, վորպես զի խղճի հանգստությամբ ասել կարողանանք. ավելին ներող յեղեք, «զի այսչափ եր կար մեր»։

Պարտք ենք համարում շնորհակալություն հայտնել Խորհրդային Հայաստանի կառավարության և հատկապես Լուսժողկոմատին, որ հնարավորություն ստեղծեց այս հատորի հրատարակության համար։

Շնորհակալություն նաև Եջմիածնի և Յերևանի մատենադարանի և թանգարանի վարիչներին, որոնք ամենայն ղյուրություն ընծայեցին ձեռագրերի ուսումնասիրության ժամանակ և հարկավորը լուսանկարելու համար։

Բարոյական պարտք ունիմ հիշելու և լուսանկարիչ, հանգուցյալ Հայկ Դադյանին, որ ոգնել է այս աշխատության սկզբնական ժամանակում լուսանկարներ պատրաստելու գործում։

Գարեգին Արքեպիսկոպոս
Հովսեփյան

Ս. Եջմիածին

* Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի գիրք Ա. և Բ 1921—1922։

** Христ. Восток. том II. вып. II. 216։